

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ԱԶԳԻՍ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Գրութեամբ պատուիրուեց Մայր Տաճարի Լուսարարպետ Տ. Ղեւոնդ եպիսկոպոսին հին եկեղեցական զգեստներ ուղարկել Խոթամանրի հայ գաղութին։ 23 Հոկտ. թ. 1298։

Գրութեամբ պատուիրուեց Մայր Աթոռի Տպարանի վարչութեան եկեղեցական գրքեր ուղարկել վերոյիշեալ հայ գաղութի աղօթատան համար։ 23 Հոկտ. թ. 1299։

Գրութեամբ յանձնարարուեց Վրաստանի Հայոց թեմի ժամանակաւոր կառավարչին յայտնել Դամիա գիւղի ընծայացու Յովհաննէս Աւետիսեանին, որ առանց հայկական ձայնագրութեան վկայականի նորա գործին ընթացք չի տրուի։ 25 Հոկտ. թ. 1301։

Դիւանի գրութեամբ պատուիրուեց Երեւանի կոնսիստորիային կարգադրել Տաթեւից Նիկողայոս վարդապետ

Տէր Աւետիքեանի ամսական ռոճիկը փոխադրել Էջմիածին նորա հասցէին, որ ժամանակաւորապէս ապրելու է Գայեանէի վանքում. 25 հոկտ. թ. 1304.

Շրջաբերական գրութիւններով յանձնարարուեց Ռուսաստանի Հայոց թեմական Առաջնորդներին՝ իրենց թեմերի հայ քահանաների միջոցով յորդորել Ռուսաստանում ապրող Տաճկահայ ունեւոր անձինքներին, որ գրական օգնութիւն հասցնեն Տաճկաստանի գաւառների աղքատ հայ մանուկների կրթական գործին. 25 հոկտ. թ. թ. 1305—1308, 1314.

Գրութեամբ պատուիրուեց Ղարսի Հայոց Հոգեւոր կառավարութեան յայտնել Զարիշատի շրջանի 7 գիւղերի հայ հասարակութեան ի գիտութիւն, որ առհասարակ քահանայի վարձատրութեան համար պէտք է թեմի Առաջնորդի միջոցով միջնորդութիւն յարուցանել. 25 հոկտ. թ. 1315.

Նորին Վեհափառութեան մակագրութեամբ պատուիրուեց Մայր Աթոռի Գ. Հոգեւոր Ճեմարանի Վարչութեան՝ ճեմարանի կանոնագրութեան 79-րդ. յօդուածի համաձայն անցեալ 1910/1911 ուսումն. տարում թեմական դպրանոց աւարտողներին ընդունել այս 1912/1913 ուսումն. տարուայ սկիզբը սովորական քննութեամբ, իսկ 1909/910 ուսումն. տարում և առաջ աւարտողներին ենթարկել հարցաքննութեան բոլոր առարկաներից. 25 հոկտ. թ. 1321.

Կոնդակ ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով պատուիրուեց ուղարկել բոլոր թեմական առաջնորդներին ժամանակաւոր մատեաններ և տպագրած թերթեր, Կովկասի Տ. Փոխարքայի թոյլտուութեամբ համաձայն մի տարի ժամանակով, բոլոր հայաբնակ վայրերում Հայոց եկեղեցական ծխական դպրոցների օգտին դպրոցական ֆոնդի հանգանակութիւնը կազմակերպելու համար. Գրացած դրամը պահել Մայր Աթոռի գանձարանում Վեհափառ Կաթուղիկոսի տեսչութեան ներքոյ. 25 հոկտ. թ. 1331.

Կոնդակ Մայր Աթոռի միաբան Տ. Ղևոնդ եպիսկոպոսի անունով, որով առաջադրուեց ձեռնադրել աբեղայ Մայր Աթոռի միաբան Յակոբ սարկաւագ Յակոբեանին։ 25 հոկտեմ. թ. 1337։

Դիւանի գրութեամբ պատուիրուեց Մայր Աթոռի տպարանի Վարչութեան եկեղեցական գրքեր ուղարկել Ռումինիայի Թրրկու-Օգնայի գաղութի հայոց եկեղեցուն։ 27 հոկտեմ. թ. 1362։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի Առաջնորդին՝ ուղարկել Նոր-Նախիջևան քաղաքի հայ քահանաների ծառայութեան ցուցակները։ 29. հոկտեմբերի թ. 1379։

Կոնդակով թոյլ տրուեց Աստրախանի թեմական Առաջնորդին բանալ Կուբանեան շրջանի Խոյթա գիւղում եկեղեցական ծխական դպրոց։ 30 հոկտեմ. թ. 1385։

Կոնդակ ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով պատուիրուեց Մայր Աթոռի դրամներից յատկացնել հայոց եկեղեցական-ծխական դպրոցների օգտին տասն եւ հինգ հազար ռուբլի եւ մուծել առաջին ժապաւինած տումար։ 30 հոկտեմբերի թ. 1393։

Դիւանի գրութեամբ յայտնուեց Ռումինիայի հայոց հոգևոր հովին, որ 1913/1914 ուսումն. տարում ուղարկել ձեմարան ընդունելու համար երկու լաւ պատրաստուած աշակերտ։ 31 հոկտեմ. թ. 1404։

Կոնդակով թոյլ տրուեց Աստրախանի թեմական Առաջնորդին Կիսլավոդոսկի ծխական դպրոցը կոչել Ստեփանոս Բէշտաուի անունով և վերջինիս պատկերը կախել դպրոցում։ 4 նոյեմբ. թ. 1427։

Կոնդակ Մայր Աթոռի միաբան Տ. Կարապետ եպիսկոպոսի անունով, որով յանձնարարուեց հրաւիրել Տ.Տ. Յուսիկ, Գարեգին, Մեսրոպ և Ներսէս (Տ. Միքայէլեան) վարդապետներին և քննել «Բրիտանական ընկերութեան» ուղարկած

աւետարանի աշխարհաբար թարգմանութիւնը և արդիւնքը զեկուցանել Նորին Սրբութեան։ 5 նոյեմբ. թ. 1438։

Կոնդակ Պարսկա-Հնդկաստանի Առաջնորդական խորհրդարանի անունով, որով ուղարկելով առաջնորդի ընտրութեան համար կազմած հրահանգ, պատուիրուեց տպագրել և բաժանել գործակալներին և պաշտօնական հաստատութեանց և հսկել, որ Առաջնորդական ընտրութիւնը կանոնաւորութեամբ կատարուի։ 8 նոյեմբ. թ. 1442։

Դիւանի գրութեամբ յայտնուեց Վրաստանի թեմի ժամանակաւոր կառավարչին, որ Նորին Սրբութիւնը թոյլատրեց Տ. Եղնիկ աւագ քահանայ Երզնկեանին, ընծայացուների համար երեկոյեան դասընթացներ բանալ հայկական ձայնագրութիւն ուսուցանելու համար։ Նոյեմբ. թ. 1469։

Կոնդակ ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով առաջադրուեց կարգադրել ուղարկել Նոր Բայազետի գործակալ Տ. Արտակ վարդապետին նոյն պաշտօնով Բագու համաձայն Շամախու Առաջնորդի միջնորդութեամբ։ 12 նոյեմբ. թ. 1478։

Կոնդակով առաջադրուեց նոյն Սինոդին կարգադրել քանդել միաբանական հին շէնքերը, որ գտնուում է Տաճարի հիւսիսային կողմը, որպէսզի կառուցուի միաբանութեան համար նոր հարմարաւոր շէնք։ 12 նոյեմբ. թ. 1479։

Մակագրութեամբ ուղարկուեց ս. Էջմիածնի Սինոդին պ. Բէհրուտ Մէլիք-Ալահվերդեանի ուղարկած դպրոցական ֆոնդի օգտին 35 ռուբլի 73 կոպ. 12 նոյեմբ. թ. 1480։

Կոնդակ Ղարաբաղի Հայոց թեմական դպրանոցի Հոգաբարձութեան նախագահ Տ. Զաւէն վարդապետի անունով, որով թոյլատրուեց, քաղաքական իշխանութեան թոյլտուութիւն ստանալուց յետոյ, դպրանոցի 75 ամեայ յոբելեանը յաւերժացնելու համար՝ հանդանակութիւն բանալ դպրանոցը ապահովելու համար։ 13 նոյեմբ. թ. 1484։

Դիւանի գրութեամբ յայտնուեց Աստրախանի թեմակալ Առաջնորդին, որ Նորին Վեհափառութիւնը դիմեց Ներքին գործոց Տ. Նախարարին՝ Աստրախանի թեմական դպրանոցի բացման խնդիրը շուտով ընթացք տալու մասին։ 16 Նոյեմբ. թ. 1503.

Դիւանի գրութեամբ ուղարկուեց Մայր Աթոռի Կենդրոնական Ուսումնարանական Յանձնաժողովին Երևանի, Ղարաբաղի, Շամախու և Աստրախանի թեմերի վիճակագրական տեղեկագրերը։ 16 Նոյեմբ. թ. 1508.

Մակագրութեամբ պատուիրուեց Մայր Տաճարի լուսարարապետին տալ Աղէքսանդրապօլի վաճակի համար՝ Յակոբ քահանայ Խաչվանքեանին Սրբալոյս Միւռոն։ 18 Նոյեմբերի թ. 1512.

Մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Սինոդին՝ ի նկատի ունենալով, որ Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ Տ. Ներսէս Արքեպիսկոպոսը և թեմական դպրանոցի Հոգաբարձութիւնն խնդրել են Նորին Սրբութեան կարգադրել Խալիպեան դպրոցի շէնքի վաճառման խնդիրը, քանի որ դպրոցի վնաս է կրում դպրանոցը, ուստի պատուիրուեց ս. Էջմիածնի Սինոդին անյապաղ ընթացք տալ այդ գործին և տնօրինել, ինչ որ անհրաժեշտ է և օգտակար՝ այդ շէնքի վաճառման վերաբերմամբ։ 18 Նոյեմբերի թ. 1522.

Կոնդակ Տփխիսի Մարիամեան-Յովնանեան դպրանոցի Հոգաբարձութեան անունով, որով հաստատուեց դպրոցի պաշտօնեաների Թոշակարկղի կանոնադրութիւնը։ 20 Նոյեմբերի թ. 1524.

Մակագրութեամբ պատուիրուեց Մայր Աթոռի Ուսումնարանական Յանձնաժողովի Նախագահ Տ. Մեսրոպ Եպիսկոպոսի անունով, հրաժարուած անդամ Տ. Մեսրոպ վարդապետ Մաքսուդեանի փոխարէն հրաւիրել ժողովի Տ. Ներսէս վարդապետ Տէր-Միքայէլեանին, որ նշանակ-

ւում է Ուսումն. յանձնաժողովի անդամ։ 22 նոյեմբերի թ. 1548.

Կոնդակ Մայր Աթոռի Ուսումնարանական Յանձնաժողովի անունով, որով առաջարկուեց իր կարծիքներն ու գրութիւնների սեւագրութիւնները ներկայացնելու Նորին Վեհափառութեան ի տնօրինութիւն և ապա ուղարկել Դիւանի կնքով. նախագահի բացակայութեան ժամանակ ժողով գումարել փոխ-նախագահ Տ. Բագրատ վարդապետի նախագահութեամբ և վարձել մի գործավար գործերը կանոնաւոր վարելու նախագահի անմիջական հսկողութեամբ։ 22 նոյեմբերի թ. 1551.

Կոնդակներ Չեռնոմորեան նահանգի Կրաեւսկ-Բաքու-չեսկ, Դէսիման և Բաղդոլ գիւղերի ծխական հոգաբարձութեան անունով, որոնցով արտօնուեց այդ գիւղերում հայոց ծխական դպրոցներ բանալ։ 23 նոյեմբերի թ. թ. 1557, 1558, 1559.

Դրութեամբ խնդրուեց ներքին գործոց Տ. Նախարարից թոյլ տալ Աստրախանի և Բեսարաբիայի թեմերի հայերի մէջ ծխական դպրոցների ֆոնդի օգտին հանգանակութիւն կատարել մի տարի ժամանակով։ 24 նոյեմբ. թ. 1562.

Շրջաբերական կոնդակներ Ռուսահայոց թեմական Առաջնորդների անունով, որով առաջարկուեց կազմել իւրաքանչիւր քաղաքում Յանձնաժողովներ դպրոցական ֆոնդի օգտին հանգանակութիւն անելու համար։ 26 նոյեմբերի թ. թ. 1564—1568.

Դիւանի գրութեամբ յայտնուեց Ներսէս վարդապետ Տէր-Միքայէլեանին, որ Նորին Վեհափառութեան կարգադրութեամբ, նշանակուած է ուսումնարանական Յանձնաժողովի անդամ, 27 նոյեմբ. թ. 1573.

Դիւանի գրութեամբ առաջարկուեց Վրաստանի հայոց կոնսիստորիային առաջարկել Սուխումի շրջանում ապրող տաճկահպատակ Եղիշէ վարդապետ Ամատունուն, որ ան-

միջապէս վերադառնայ Տաճկաստան. 28 նոյեմբ. թ. 1578.

Դիւանի գրութեամբ պատուիրուեց Ղարսի Հոգևոր կառավարութեան վաւերացնել Համազասպ քահ. Ղարադէօզեանի կազմած բժշկապետ Ալէքսանդր Տէր Յարութիւնեանի կտակած գոյքի և բոլոր դրամական եկամուտների և պահանջների ցուցակը և ուղարկել Ներքին Վեհափառութեան. 28 նոյեմբ. թ. 1580.

Դիւանի գրութեամբ պատուիրուեց Ղարսի Համազասպ քահանայ Ղարադէօզեանին կազմել բժշ. Ա. Տէր Յարութիւնեանի կտակով թողած գոյքի և դրամական եկամուտների և պահանջների ցուցակը և Հոգևոր կառավարութեան վաւերացմամբ ուղարկել Ներքին Վեհափառութեան. 28 նոյեմբ. 1588.

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Կոնդակով գոհունակութիւն յայտնուեց Նոր-Նախիջևան քաղաքի ս. Յովհաննու Կարապետի եկեղեցու երեսփոխան պ. Կարապետ Դէօրգեան Խոջայեանցին՝ նորա մրաջան գործունէութեան համար. 30 հոկտեմբ. թ. 1386.

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան պ. Ստեփաննոս Աւետիսեան Բէչատուի անունով՝ Կիսլավոդսկի եկեղեցական-ծխական դպրոցի շէնքը իր ծախքով շինելու համար. 4 նոյեմբերի թ. 1423.

Կոնդակ օրհնութեան պ. պ. Յովհաննէս, Եղիա և Դանիէլ Ղազարոսեան Մայիլեանների անունով՝ իրենց ծախքով Շամախի քաղաքում հայոց եկեղեցի շինելու համար. 20 նոյեմբերի թ.1527.